ՆՈՐ-ԴԱՐ

№ 29 ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հինգշաբթի, 13 Փետրուարի — 1903 — Հինգշաբթի, 13 Փետրուարի ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 29

Տարեկան 10 ռուբ., վեց ամիսը՝ 6 ռուբլի, երեք ամիսը 3 ռ. 50 կոպ., ամիսը (Թիֆլիսում) 1 ռ., հատով 5 կ.: Բաժանորդներ ընդունւում Թիֆլիսում միմիայն խմբագրատանը:

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis, Rédaction «Nor-Dar»

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը: Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով: Յայտարարութիւնների բառին 2 կ., ընկերութիւնների համար կրկնապատիկ:

Ներսիսեան Հայոց Հոգևոր դպրոցի

Հոգաբարձութիւնը պատիւ ունի յայտնել, որ սոյն փետրուարի 14-ին Վանքայ առաջ եկեղեցում կատարուելու է հոգեհանգիստ դպրոցի երջանկայիշատակ հիմնադրի՝

ՆԵՐՍԷՍ V ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Դպրոցի ամարական տարեկան հանդէսը լինելու է մայիսին:

(51) 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող. — Ձատ վատ նշաններ են:
Քրոնիկոն — Լուրեր:
Մեզ գրում են: — Վաղարշապատից: Լօռուց:
Պատրաստուող ապագայ:
Մամուլի շուրջը:
Թղթակցութիւններ. — Պետերբուրգ: Ախալքալաք. Նամակ Պարսկաստանից Թեհրան:
Քաղաքական. — Թիւրքիա: Մակեդոնիա: Բուլղարիա: Անգլիա:
Քաղաքական լուրեր:
«Նոր-Դար»-ի հեռագրեր:
Տեղեկատու:
Յայտարարութիւններ:

Թիֆլիս, 12 փետրուարի 1903 թ.

ՇԱՏ ՎԱՏ ՆՇԱՆՆԵՐ ԵՆ

Մարդու սիրտը լցւում է անկեղծ ուրախութեամբ, երբ յիշում է, թէ մեր նախնիքները ինչպիսի փոխադարձութեամբ ու պատրաստակամութեամբ, ինչպիսի մարդասիրական զգացմունքներով լցուած բաժին են հանել իրենց ստացուածքից իրենցից մօտ գտնուած այս, կամ այն հայ վանքին, կամ մենաստանին և այդպիսով ոչ միայն առմիշտ ապահովել նրանց գոյութիւնը, հապա այդ հաստատութիւնները դարձրել ապագայ սերունդների համար հարուստ եկամուտների մշտական աղբիւր:

Սակայն ինչով ենք մենք, նրանց ժառանգորդներս, արդարացնում այդ մարդկանց բարի ցանկութիւնները, նրանց կողմից մեզ վրայ դրուած բարոյական պարտականութիւնները՝ հասարակական գոյքը, ստացուածքը պահպանելու, խնամելու ու շահեցնելու վերաբերութեամբ:

Բացարձակապէս ոչնչով:

Ահա այն կորուստ, բայց լիովին ճշմարիտ պատասխանը, որ ամեն մի բարեխիղճ հայ պարտաւորուած է տալ այդ անողորմելի հարցին:

Մեր պարբերական մամուլի էջերում խիստ շատ անգամներ է խօսք եղել մեր վանքապատկան կալուածների խնամքից բացարձակապէս զուրկ լինելու մասին, և ամեն անգամ էլ չարաչար կերպով հարուածուել, մարակուել է այն գիտակցին անտարբերութիւնն ու անհոգութիւնը, որ թագաւորում է, համարեա առանց բացառութեան, մեր բոլոր վանական կառավարութիւնների մէջ, մանաւանդ կալուածների մատակարարութեան վերաբերեալ գործում:

Որ դրէի այդքան արշաւանքներին ու յարձակումները ոչ միայն ոչ մի հետևանք չեն ունեցել չարիքը բուժելու տեսակէտից, հապա որանից միրանի տարի առաջ գոյութիւն ունեցող վիճակը աւելի ևս ընկել, վատթարացել է:

Մենք ամենևին նպատակ չունենք այստեղ մեր վանքերի՝ տարիների ընթացքում օրինաւոր, կամ ապօրինի ճանապարհներով այս կամ այն կալուածքից ու ստացուածքից զրկուելու պատճառով կրած անդարմանելի կորուստները թուելու, կամ մեր բոլոր վանքերին յատուկ եղող ամենայոռի մատակարարութեան մանրամասնութիւնների մէջ մտնելու: Այդ շատ հեռու կտանէր մեզ: Մեր նպատակն է միայն մատնացոյց լինել դարձեալ նոյն վանական իշխանութեան ծայրայեղութեան հասնող թուլութեան մի դէպքի վրայ, որը, ոչնչով պակաս չլինելով Գանձասարի վանքի հանրային հողերի կապալով տալու տխուր փաստից, մեքանի տարիճան ևս աւելի զօրեղ, անհանդուրժելի և վրդովեցնող է:

Հաւատում էք, որ մի հաստատութիւն, ունենալով հանդերձ 60—80 հազար դեսեատին հող, անկարող է հանդիսանում օրէնքով սահմանուած պետական տուրքն անգամ վճարելու: Բանանք «Նոր-Դար»-ի այս տարուայ 19-րդ համարը և կարդանք Ձուշուց հաղորդուած այս այլանդակ իրողութեան լուրը.

Լսում ենք, որ պետական հարկերի կառավարիչը Գանձասարի վանքի եկամուտները կալել է ձեռքի հանելու և վանքի կալուածներից մի կտոր անտառ է յատկացրել կտրելու և փայտը վաճառելու, որպէսզի պետութեան հասանելի կալուածական հարկը ստացուի:

Ճշմարիտն ասած, մարդ շուարում է այդ ամենադաժան իրականութեան առաջ. չգիտէ, ցաւի՞ ու լա՞յ, թէ՞ ծիծաղի ու արհամարհէ. որովհետև թէ մէկին է արժանի և թէ միւսին:

Վաթսուն, վեցհարիւր, կամ վեցհազար չէ! վաթսունհազար դեսեատին տարածութիւն!! և այդքան ստացուածքը, այդքան հողերն ու անտառները անկարող լինեն իրենց տարեկան ծախսն անգամ հանելու:

Ասում էին, կրկնում էին շարունակ, թէ տասնեակների զարի անցել է, սակայն այդ փաստն տասնեակների տառապելը չէ՞ մի՞թէ:

Մեր երևակայութիւնը չէ զօրում ենթադրել մի այդքան յոռի, ուղէտ իշխանութիւն, կամ վարչութիւն, որ իր տրամադրութեան տակ ունենալով հարստութեան այդպիսի հսկայական մի աղբիւր, չկարողանայ իր ընթացիկ ծախսերը ծածկել. իսկ եթէ դա ներկայանում է իբրև մի ճշմարիտ իրողութիւն, որի մասին մենք չենք ուզում ամենևին կասկածել,—այդ դէպքում պարտաւորուած ենք տեսնելու, թէ այդտեղ թաքնուած է գործումների մի անհադին կոյտ, ոչ-մարդու չարագործութեան մի ամբողջ շարք, որ փչացնում, ապականում ու կործանման է մատնում ամեն բան:

Եւ ինչու զարմանալ, որ անխնարկուած հաստատութեան մէջ կարող են այդ բոլորը գոյութիւն ունենալ և տարիներ շարունակուած լինել. զարմանալու ոչինչ չլինելուց յետոյ, պէտք է դեռևս դահանալ, որ զարթը զրանից աւելի վատթարոյն վիճակի չէ հասել, որովհետև հսկողութեան, կենտրոնի բացակայութիւնը, հաշուառութեան չգոյութիւնն ընդունակ են զրանից շատ աւելի յոռի դրութիւններ ստեղծելու:

Մեր առաջ բերած փաստն այն ժամանակ զարմանալի ու անհասկանալի կլինէր, երբ մեզ ասէին, թէ մեր հոգևոր բարձրագոյն իշխանութիւնը կամ ինքնակրթարար, ուրիշ խօսքով, իր մի անդամ հաստատած կարգապահութեան հետևելով, իսկ եթէ այդ չկայ, գանէ մամուլի ու հասարակաց կարծիքի ստիպմունքների տակ պարբերաբար մտքերի ու իրքի հաշիւ է պահանջում Գանձասարի կամ այլ վանքերի իշխանութիւններից, այս կամ այնտեղ երևան եկած գործումներին քննում ու վերստուգում է և հասարակաց ստացուածքից անամօթաբար օգտուող մարդկանց հալածում ու պատժում է. ասում ենք, այդ դէպքում, 60 հազար դեսեատին հողերի կալուածական անվճար մնալու նման փաստերը, չլինէր, զարմանալի պէտք է թուէին, որովհետև չպէտք է կարողանային գոյութիւն իսկ ունենալ... Ուր կայ կանոնաւոր հաշուետուութիւն, աչալուրջ հսկողութիւն, վերստուգում, այնտեղ գործումը չի կարող երբէք այդքան հրեշաւոր չափեր ստանալ: Այդ անփութ փաստերով ապացուցուած ճշմարտութիւն է:

Բայց քանի մեր հոգևոր ծայրագոյն իշխանութիւնն իրեն յանձնուած ստանձների վերահսկողութիւնը իր պարտաւորութիւնների սահմանից դուրս կըհամարի և կամ ժամանակ չի ունենայ այդպիսի «մանր-մունր բաներով զբաղուելու»,—հայ հասարակութիւնը մինչեւ էլ դատապարտուած պէտք է լինի այդ տեսակ անօրինակ նորութիւններ լսելու, իսկ մօտիկ ապագայում—աւելի ևս խիտերը:

Բայց մինչև ե՞րբ պէտք է շարունակուեն այդ դատապարտելի պարտազանցութիւնն ու թուլութիւնը: Եթէ այդ ամենի հետ կապուած չլինէին խոշոր նիւթական կորուստներ, գուցէ հարկ չլինէր խօսել, բայց չէ՞ որ միլիոններ զգալի են. միլիոններ, որոնք ճնշում են մեզ իրենց անհադին ծանրութեամբ:

Մինչ ե՞րբ...

Վարդանանց տօնի պատճառով «Նոր-Դար»-ի հետևեալ համարը լոյս կտեսնի շաբաթ, փետրուարի 15-ին:

ՔՐՈՆԻԿՈՆ

Պարիզի մեր թղթակիցը մի երկար նամակով նկարագրում է Ձատօ Դօյի թատրոնում այս օրերս կազմակերպուած այն հսկայական միտինգը, որի մասին նա հաղորդել էր առաջուց: Միտինգում յօշափուել են հայոց և մակեդոնական խնդիրները: Ճառ են խօսել, ի միջի այլոց, Դեսսուրնել դը-Կոնստան (նախագահ), Դրեն Հոչէն (պաշտպանողական կուսակցութեան պարագլուխ), Պռեսանսէ (հրապարակախօս), Ժան Ժոռէս (ընկերվարական կուսակցութեան պարագլուխ): Ներկայ են եղել մօտ 4000 հոգի:

— Մամաջանեանի խմբական համերգը նրա ղեկավարութեամբ յաջողութիւն ունեցաւ: Նոյնպէս համակրութեամբ ընդունուեցան օր. Աղասարեան և պ. Նալբանդեան. առաջինը իբրև նուագածու դաշնամուրի վրայ, երկրորդ իր հայրենի երգերով: Վերջինս ունի փոքր և հաճելի ձայն, շատ յարմար սալոնական կես գանդաղ—կէս տխուր երգերի համար: Ժողովրդանի դահլիճը համարեա թէ լիքն էր և շատ ծափահարութիւններով հասարակութիւնն իր գոհութիւնն յայտնում էր համերգին մասնակցողներին, առանձնապէս Մամաջանեանին, որ պատահական երգիչներից և երգչուհիներից կարողացել է կազմել երգեցիկ խումբ, որ բաւականին յաջողութեամբ երգելով գոհութիւն է պատճառում լսողներին:

— Ռուսաց մամուլի 200-ամեակը յոբելեանելու համար, ինչպէս յայտնի է, Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը որոշել է քաղաքիս միջնակարգ դպրոցներում երկու թոշակաւոր պահել մամուլի չքաւոր աշխատաւորների զաւակներից, մի մահճակալ դնել Միքայէլեան հիւանդանոցում նոյն աշխատաւորների համար թոյլտուութիւն խնդրել քաղաքային ինքնավարութեան գործերի մասին տեղեկատու թերթ հրատարակելու: Ներկայումս քաղաքագլխի պաշտօնակատարը քաղաքային խորհրդին առաջարկում է մի առանձին յանձնաժողով ընտրել յիշեալ թոշակաւորների և մահճակալի համար կանոնադրութիւն կազմելու և տեղեկատու թերթի հրատարակման խնդիրը մշակելու նպատակով:

— Թիֆլիսի քաղաքային խորհրդի իրաւասուների փետրուարի 11-ին ունեցած մասնաւոր խորհրդակցութեան ժամանակ քաղաքագլխի պաշտօնի համար թեկնածու նշանակուեց Թիֆլիսի նախկին քաղաքագլուխ իշխ. Ն. Վ. Երկայնաբազուկ-Արղութեան:

— Փետրուարի 11-ին երկարատև հիւանդութիւնից յետոյ Թիֆլիսում վախճանուեց Թիֆլիսի Միքայէլեան հիւանդանոցի գլխաւոր բժիշկ Ա. Ա. Պաւլովսկին:

— Թիֆլիսի պարսից ընդհանուր հիւպատոսը մեկնեց Գանձակ և Բագու:

— Քաղաքային գործերին վերաբերեալ Թիֆլիսի նահանգական ատեանը փոխել էր Թիֆլիսի քաղաքային խորհրդի այն որոշումը, որով օրինական էր ճանաչուած քաղաքային դպրոցական կոմիտեի գոյութիւնը: Քաղաքային խորհուրդը փետրուարի 10-ի նիստին, լսելով նահանգական ատեանի այդ վճիռը, միաձայն որոշեց բողոքել դրա դէմ սենատին:

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ. — Փետր. 5-ից մինչև օրս (փետր. 8) ձիւն է գալիս, այնպէս ձիւն, որ տեսնուած չէ. ձիւնը հասնում է 6—8 վերշոկ բարձրութեան. ցուրտ է:

ԼՕՌՈՒՑ. — Լօռու երկու գործակալութիւնները հոգևոր իշխանութիւնը միացրեց. հեռացրին պաշտօնից գործակալ Տէր Խորէնին. այժմ երկու գործակալութիւնը յանձնուած է Լօռու քառասուն գիւղերի Տ. քահանայ Վերանեանին: Ժողովրդի մէջ լուր է պտտում, որ Հ. Վերանեանն էլ երկար չէ մնալու այդ պաշտօնում. նրան պէտք է փոխարինէ Ա. քահանայ Առաքեան, երբ կոնսիստորիայի հետ վերջացնէ իր գործակալութեան ժամանակից մնացած տալացուն առնելացուի հաշիւները: Դժուարանում ենք տարածուած լուրերին հաւատալ, քանի որ թեմը այժմ կառավարող ունի:

—Ամբողջ Լօռին ծածկուած է մեծ ձիւնով: Ցաւերի հիւանդութիւն չկայ:

ՊԱՏՐԱՍՏՈՒՈՂ ԱՊԱԳԱՅ

(Նամակ Մոսկուայից)

(Վերջ*)

Ռուս ազէտ դասակարգի այդ արթնութիւնը արդէն բաւականին լաւ ապացոյց է այն երևոյթի, որ Ռուսիայում այժմ կատարւում է մի գործ, մեծ գործ: Այդ հաստատւում է և ուրիշ, ըստ երևոյթին շատ չնչին նշանակութիւն ներկայացնող երևոյթներով: Կիրակի օրերը դուրս եկէք Սուխարևի հրապարակը. Դա այստեղի համար նոյնն է, ինչ որ Սոլդաթսկի բազարը Թիֆլիսի համար է: Այստեղ կիրակի օրերը Մոսկուան հանդէս է բերում այն կիսամաշ և մասամբ նոր իրերը, որոնք կարելի է ձեռք բերել շատ էժան գնով: Այստեղ ամեն ինչ կարելի է գտնել: Այդ հրապարակում մի՝ շատ մեծ տեղ բռնում են և գրավաճառները: Հազարաւոր օրինակներով այդ օրը գրքեր են ծախւում, հազարաւոր հատորներով այդ օրը տպագրական խօսքը տարածւում է լայնածաւալ Ռուսիայի խորքերը՝ Մոսկուա եկած գաւառական ուսուցչի, այնտեղ սովորող ուսանող դասակարգի, օտարաքաղաքացի գրավաճառի և այլոց միջոցներով: Մի ուրիշ անգամ աւելի մանրամասն կըգրեմ, բայց առ այժմ մի երկու խօսք մեր Կովկասի՝ հայոց գր ր

*) Տես «Նոր-Դար» № 28

քերի տարածման մասին։ Չէ որ Թիֆլիսը Ընդրկովկասի, առհասարակ՝ ռուսահայերի մտաւոր կեդրոնն է։ Բայց ի՞նչ՝ ամէկ օրերը այդտեղ. ցուցափաձ... Դնացում հայերէն գրքերին ինչ տեղ են բռնում։ Չնչին, ողորմելի։ Կարծես ինչ որ կորած ազգի հին, փտած, հասարակար յիշատակարաններ լինին մէկ-մէկ ցրուած գրքերը։ Կամ վերցրէք մեր կեդրոնական և միւս գրավաճառանոցները. հայերէն գրքերը գետեղուած են փոքրիկ արկղներում, ուրիշ գրքերի նրանք $\frac{1}{20}$ մասը չեն կազմում։ Առաջարկը պահանջի յայտարարն է։ Այդ ամենը ցոյց է տալիս, որ չկայ հայերէն գրքերի պահանջ։ Ուրիշ խօսքով՝ չկայ ազգային կեանք ունենալու ցանկութիւն... Բայց, ինչպէս ասացի՝ այդ մասին մի այլ անգամ աւելի մանրամասն։

Դրքերի այդ ցուցափաձառանոցից անցէք Մոսկուայի մէջ։ Կարելի է ասել՝ հարիւրաւոր խանութներ կան, որոնք ծախում են հին գրքեր և հիմնելի առուտուր ունին։ Այդ կրպակներից անցէք Մոսկուայի յայտնի գրավաճառանոցները՝ Կարբասնիկով, Վօլֆ Սուվորին, Տրուդ և այլն։ Սրանք տարածում են նոր գրքեր։ Հարիւր հազարաւոր, միլիօնաւոր օրինակներով այդ գրավաճառանոցները գրքեր են ցրում ռուս ընթերցող հասարակութեան մէջ։ Եթէ այս ամենին միացնէք հիւանդանոցներում ընթերցանութիւն տարածելու եղանակը, ժողովրդական գրադարանների հետզհետէ շատանալն ու բազմանալը և այլն,—այն ժամանակ հասկանալի կդառնայ, թէ Ռուսիայում այժմ ինչ է տեղի ունենում, ինչ հսկայական գործ է կատարւում։ Առանց բացառութեան բոլոր խաւերում ինչ որ ոյժեր աշխատում են տարածել ժամանակակից քաղաքակրթութիւնը և ուր արթնացնել դէպի այդ քաղաքակրթութիւնը... Մի մոռանաք յիշել և այն յառաջադիմութիւնը, որ անում է ռուս պարբերական մամուլը։ Իւրաքանչիւր տարի տասնեակներով աւելանում են պարբերական օրգանները, ամէն մինը տարածւում է հազարաւոր, տասնեակ հազարով, երբեմն և հարիւր հազարներով։ Ի լրումն այս ամենի՝ վերցրէք ռուս գիտութեան և, մանաւանդ գեղարուեստի զարգացումը Ռուսիայում։

Մանուկ է ռուս գրականութիւնը, բայց նա արդէն կատարում է գործեր, որոնք կարող են պատիւ բերել և աւելի հասակ ունեցող գրականութիւններին։ Ռուս գեղարուեստը, օրինակ՝ միայն ռուսական նշանակութիւն չունի։ Նա ունի մի քանի խոշոր ներկայացուցիչներ, որոնք եւրոպական գրականութեան մէջ բռնում են ամենաառաջնակարգ տեղեր։ Դրան ապացոյց՝ Տուրգենևը, Դոստոեւսկին, Պուշկինը, մասամբ Գոգոլը, Լերմոնտովը, մանաւանդ Տոլստոյը։ Ժամանակակից ռուս գրողների մէջ կան մարդիկ, որոնց արտադրութիւնները մեծ բաւականութեամբ թարգմանւում են օտար լեզուներով. Կորոլենկոն, Չեխովը, Վիրեսաեւը, իսկ վերջին ժամանակներս մանաւանդ Գորկին՝ գրաւում են եւրոպական հասարակութիւնների ուշադրութիւնը, յաճախ և յափշտակութիւնը, ինչպէս Գորկին, ... Ռուս գեղարուեստի ազդեցութիւնն արդէն շատ զգալի է Եւրոպայում, այնքան զգալի, որ արդէն Եւրոպայում ձայներ են լսւում այդ ազդեցութեան դէմ կռուելու։ Տեսնում էք, ռուս հոգին որքան է առաջացել, որ նա սկսում է իրեն ենթարկել և եւրոպական միտքը։ Պարզ է՝ այս չի նշանակում, որ Ռուսիան գրականութեան կողմից հասել է Եւրոպային։ Ոչ, դրա համար նա դեռ շատ հաց ու պանիր պիտի ուտի։ Միայն ուզում եմ մատնացոյց անել, որ ինչպէս ժողովրդի ստորին, այնպէս և վերին խաւերում կատարւում, ստեղծւում է մի գործ։ Եվ չեմ վերցնում ռուս գեղարուեստի միւս մասերը,—նկարչութիւնը, երաժշտութիւնը և այլն, որ նոյնպէս լա կրում են համաեւրոպական դեր խաղալ։

Այս ամենից պարզ բղխում է մի եզրակացութիւն։ Ռուս ժողովուրդը, ընդհանուր առմամբ լուսաւորւում, առաջ է գնում։ Ռուսական հոգին, թօթափած այդ հոգին լինող նախապաշարմունքները՝ դիմում է դէպի կատարելութիւն և բարձր տեսակի ստեղծագործութիւն։ Այդ խորհրդութիւնը չի հակասում այն երևոյթին, որ Ռուսիայում գրականութեան մէջ կան զանազան ուղղութիւններ, նոյնիսկ բարոյական զանազան աստիճանների ակը գրողներ։ Անշուշտ՝ գրականութեան, կամ լոյսի մէջն էլ միշտ կան լաւն ու վատը։ Գլխաւորը այդ չէ, գլխաւորն այն է, որ լաւը առաջադիմէ։ Իսկ այդ կողմից Ռուսիան բախտաւոր է. նա, ինչպէս ասացի ընդհանուր առմամբ դիմում է դէպի լուսաւոր ապագայ։ Այն, ինչ այժմ կատարւում է՝ հետաքրքրական է՝ ոչ թէ իր բացարձակ արժէքով, այլ այն նշանակութեամբ, որ նա ունի ապագայի վերաբերմամբ։ Ներկան նշան է, որ Ռուսիային սպասում է փառաւոր ապագայ։ Այս ներկայի մէջ արդէն կարելի է մութ կերպով նշմարել այդ ապագան։ Ռուսիայի ներկայով պատրաստւում է նրա ապագան և այն վսեմ ապագան... Ռուս մարդը չի կարող չհաւատալ այդ ապագային և չըգործել։

Բայց որն է այն ոյժը, որը արտադրում է այս ամենը, որն է այն զօրութիւնը, որը Ռուսիային բազմաթիւ խոչընդոտների միջից քարշ է տալիս դէպի առաջադիմութիւն։

Այդ ոյժը՝ ռուս այն մարդիկն են, որոնք ունեն բարձր տեսակի գոյութիւն ունենալու ջիղ։ Որքան և պնդեն թէ ռուսական ժամանակակից քաղաքակրթութիւնը արդիւնք է մեր ժամանակուայ տնտեսական և այլ ընդհանուր պայմանների՝ այնուամենայնիւ, հակառակ նոյնիսկ դրան՝ կարելի է պնդել, որ ռուս կեանքի մէջ հաստատուող այժմեան մեծ գործի հեղինակը ռուս լաւ մարդն է, կամ ռուս հոգու լաւ հոգին է. լաւ մասն է։ Պարզ է՝ պէտք է պահանջ լինի, որ այդպիսի մարդիկ ստեղծուեն ու գործեն։ Բայց որն է այդ պահանջը, մի՞թէ բաւական չէ այն գգայցողութիւնը, թէ այս ինչ բանը վատ է և պէտք է լաւ անցնել։ Ռուս լաւ մարդը այդպէս է գործում, նա պարզ տեսնում է այն չարիքը, որ կայ իր ազգի կեանքում։ Առանց իմաստակութիւնների նա կուլ է բռնում այդ չարիքի հետ և չի կարող հանդուրժել, որովհետեւ նա չարիք է, պէտք է այդ չարիքը վերացնել։ Չարիքը արմատաքի՞ն անելու ներքին անդիմադրելի պահանջով համակուած ռուս մարդու հարուածները հուժկու են և վճռական է այն գործը, որ ստեղծում են այդ հարուածները։ Այդ հարուածները, այդ լայն շարժումները տալիս են ռուս ժողովուրդին դպրոց, գիրք, լրագիր, հիւանդանոց, գիմնազիա և այլն և այլն։

Սակայն՝ ռուս մարդու աւելի մեծ գործն ապագայումն է։ Ներկան, որքան և նա փառաւոր լինի շատ կողմերից՝ այնուամենայնիւ պէտք է նսեմանայ այն ճաճանչաւորող ապագայի առաջ, որը կառուցում է ռուս բարձր մարդու հզօր բազուկը, հոգու բազուկը...

Այս և ընդհանուր պայմանները հաշուի առած՝ պէտք է խոստովանել, որ ռուս կեանքը իր ներկայ առաջադիմութեամբ և ապագայի ակնյայտ լուսաւոր հեռանկարներով պարտական է իր հայրենիքի գործին նուիրուած ռուս բարձր մարդուն, այն մարդուն, որը հարկը պահանջած դէպքում առանց տատանուելու, մեծ սիրով հանդէս է գրել և իր կեանքը... Ռուս այդ մարդը ստեղծել է ռուսի լուսաւոր ներկան և պատրաստում է փառաւոր ապագան...

Մենք, հայերս՝ միայն անկարող նախանձով կարող ենք նայել ռուս մարդու այդ հրաշագործութեանը։ Մեր կեանքը՝ թէև աւելի կարիք ունի այդպիսի մարդու, բայց նա դեռ չկայ, այդ կեանքը՝ դեռ չունի այն մարդը, որը իր ուսերի վրայ վերցնէր իր ազգի քաղաքակրթական գործը... Հայերս խեղճ փքացած դրութեամբ մի այլ ճանապարհով ենք գնում...

Պ. Արելեան

ՄԱՄՈՒԼԻ ՇՈՒՐՋԸ

—

«Нов. Врем»-ի մէջ կարդում ենք մի ուրիշ նամակ, ուղղուած նշանաւոր հայակեր Վելիչկոյի անարդարանալի վարմունքի դէմ։ Այս անգամ բողոքի հեղինակն է Կ. Միխայլով, որ ասում է.

Ես էլ, իբրև հիւր ինչպէս Լազարևը, կովկասեան նշանաւոր հերոսի որդին, կամենում էի մի կերպ ընկնել «Ռուսական ժողովարան» պ. Վելիչկոյի զեկուցագիրը լսելու համար։ Սակայն ինձ ես թոյլ չտուին, առարկելով, թէ այդ զեկուցագրին կարող են ներկայ գտնուել միայն այն անձերը, որոնք ինչ-ինչ պատճառներով դասախօսի արժանի է համարել հրաւիրել։

Ես կովկասեան ոչ մի ազգութեան չեմ պատկանում, ես ինքս ռուս եմ, սակայն մանկութիւնս ի վեր շատ լաւ ճանաչում եմ Կովկասը, գիտեմ այն ոչ միայն պատմական, աշխարհագրական, ազգագրական տեսակէտից, այլ և ինձ ծանօթ են նրա լեզուներն ևս։ Ուստի ինձ ինչով բացատրել պ. Վելիչկոյի զեկուցագրերի այդ ընտրութիւնը։ Եւ միթէ «Ռուսական ժողովարանը» ընտանեկան յարկի է վերածուել։

Այս համառօտ նամակը, որ գրուած է եկել մաքուր ռուսական արիւն կրող մի ռուսի գրչից, յստակ է ցոյցեցնում պ. Վելիչկոյի մեր երէկ հրատարակած նամակի բովանդակութիւնը, որի մէջ նա պատ ի պատ աշխատում էր պաշտպանել իրեն ներուած հայատեացութեան մեղադրանքների դէմ։ Ճըշմարտութիւնը խոստովանելն էլ մի առաքինութիւն է, թող ուրեմն պ. Վելիչկոն չինի գոնէ իր զգացմունքները մարդկանցից թաքցնելու չափ ազնիւ։ Դրա համար հարկաւորութիւն չկայ հայ կամ ռուս լինելու. ամեն բանից առաջ հարկաւոր է լինել մարդ։

* * *

Մեր ընթերցողներին յայտնի են Կրոնշտադի հաշւակալ ոստիկանապետ Զաֆրովի իր պաշտօնի մէջ կատարած զեղծումները, որոնց համար նա, պաշտօնից արձակուելով, դատի մատնուեց։ «Новости»-ից առաջ ենք բերում այդ գործի մի քանի մանրամասնութիւններ, իբրև այդ կարգի պաշտօնեաների զեղծումների բնորոշ գծեր։

Զաֆրովի դատավարութեան գործը սկսուեց փետրուարի 3-ին դատախազի օգնականի մի ճառով, ուր նա ամենից առաջ մատնացոյց է անում այն դժուարութիւնները, որոնք առաջ էին գալիս գլխաւոր մեղադրեալի անձնաւորութիւնից։

Բայց բաւական յանել էր,—բացականչում է դատախազի օգնականը,—Կրոնշտադի բնակիչների և հասարակութիւնների գանգատների հետեւանքները վերջապէս հասան արդարադատութեան ականջը, որ իսկոյն եռանդով ձեռնարկեց գործին... կատարուած քննութիւնները շատ բազմակողմանի ու միանգամայն լրիւ են և այդ բանը առաջ է գալիս նրանից, որ քննիչը շատ լաւ էր հասկանում, թէ ինչպիսի ճարպիկ ու դուրս կանգնած մարդու հետ գործ ունէր նա։ Ճշմարիտ է, որ—շարունակում է դատախազի օգնականը,—վկաների ցուցմունքների ոյժը բաւական, նախանձի առաջ, որովհետեւ շատերն սոլախաններ էին տալիս, ուրիշները կանխաւ տուած իրենց ցուցմունքները բացառում էին, և այդ այդպէս էլ պէտք է լինէր, քանի որ Զաֆրովն ազատ էր թողնուած, ուրեմն և չէր կարող չազդել վկաների մտքերի վրայ։ Իսկ ազատ թողնուելու պարագան առաջ էր գալիս նրան պաշտպանուելու հնարաւորութիւն տալու ցանկութիւնից... Այնուամենայնիւ դարձեալ մնացել էին գոնէ մի քանի հոգի, որոնք շատ պայծառ գոյներով դուրս բերին Զաֆրովի տխրահռչակ գործունէութիւնը, որոնք լիովին բաւական պէտք է լինեն յարուցուած մեղադրանքը հաստատելու համար։

Դատախազի օգնականը տալով ուրիշ մի քանի հարկաւոր ծանօթութիւններ ևս, անցնում է մեղադրանքների առանձին, առանձին քննութեան։

Առաջին մեղադրական կէտն է նուիրատուութեան յատկացուած գումարների իւրացումը։ Այդ գումարները Զաֆրովը ստացել է մասնաւոր մարդկանցից և հէնց այդ պատճառով էլ նա պնդում էր, թէ այդ գումարները պահ են տրուած եղել իրեն։ Սակայն այդ յայտարարութիւնը օրէնքով արդարացի չէ ճանաչւում, որովհետև ոստիկանապետը այդ գումարները իր նպատակին չգործադրելուց յետոյ, պարտաւոր էր նրանց գործադրութեան մասին հրահանգ խնդրել իր բարձրագոյն իշխանութիւնից։ Զաֆրովն այդ չէ արել, և այդ ճանապարհով նրա իւրացրած գումարը հասնում է 415 րուբլու. այդ յանցանքն աւելի ես ծանրանում է նրանով, որ Զաֆրովը մեղադրուում է այդ գումարներն ուղարկուած թղթերը թաքցնելու համար։

Մեղադրութեան երկրորդ կէտը կազմում են ապահովագրական ընկերութիւններից ու մասնաւոր անձերից ստացուած պարգևագրութեան գումարները։ Միմիայն Կրոնշտադի քաղաքային ընկերութիւնն այդ նպատակով ոստիկանական իշխանութեան վճարել է տարեկան 200 րուբլի, որոնք մտցուած չկան գրքերի մէջ։ Սակայն Զաֆրովը իր պաշտօնը իր յաջորդին յանձնած ժամանակ, նրան տուեց ծրարի մէջ 500 րուբլի. ամբողջ գումարից պակասում էր միայն 100 րուբլի, որի համար Զաֆրովը յայտնել է, թէ իբր այդ գումարն իրեն տրուած լինի հրդեհի ժամանակ իր վերարկուի այրուելու փոխարէն։ Այդ առարկութիւնը հերքուեց, և բանից երևաց, որ նրա վերարկուին հրդեհի վտանգն չի էլ մօտեցել։ Իսկ այս ճանապարհով Զաֆրովի իւրացրած ամբողջ գումարը հասնում է 499 րուբլի 66 կոպ։

Մեղադրութեան երրորդ կէտը կազմում է հաղուստեղէնի վերաբերուած գումարների մսխումը, որոնց բոլորը ի միասին առած հասնում է 300 րուբլու։

Այս դատախազի օգնականն անցաւ ոստիկանատան համար գնուած փայտեղէնին, ուր Զաֆրովը օգտւում էր այն բանից, որ փայտը կտրում էր տալիս հրշէջների ձեռքով, իսկ գրքերի մէջ ցոյց էր տալիս այդ իբրև ծախս։ Փայտի մատակարարներից մինը, Ռումեանցև, ուղղակի յայտարարել է, թէ ինքը ոչ մի ժամանակ այն քանակութեամբ փայտ չէ յանձնել ոստիկանատան, ինչ քանակութիւն որ նշանակւում էր ստացագրերի մէջ. գործը, ինչպէս ասում են, տարւում էր «տանովարի» նա (Ռումեանցևը) հաշիւ էր ներկայացնում չյանձնած փայտի համար, իսկ Զաֆրովը նրան վճարում էր տարեկան 200—300 րուբլի։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 փետրուարի.—Ամսոյս 2 ին տեղիս մի խումբ թատերասէրներ ներկայացրին Պարոնեանի «Մեծապատիւ մուրացկաններ»-ը պիէսը վերածած։ Վարձուած էր եկաթուղու կլուբի դահլիճը։ Կրկսր փորձերից յետոյ վերջապէս համոզուեցին, որ շատ մեծ դահլիճներ չարժէ վարձել։

Ներկայացումը բաւական յաջող էր։ Մի բան, որ շատ աչքի էր ընկնում, մի քանի դերակատարների արտասանութիւնն էր։ Պարզ է, որ ռուսահայի համար շատ դժուար է պոլսեցու նման խօսել, ինչպէս և վերջինիս համար ռուսահայ բարբառով։ Ընտրուած պիէսը, մեր կարծիքով, անյարմար էր որովհետև դժուար հասկանալի էր, թէ հասարակութեան և թէ իրենց դերակատարներին։

Աբիսողոմ աղան՝ պ. Դէլօյեան, լինելով թուրքահայ, յաջող և անխօս կատարեց իր դերը։ Մանուկ աղան՝ (պ. Միրեան) նոյնպէս լաւ էր։ Տիկին Մարիամ (օր. Ասատրի) և տ. Զուշան (օր. Վարսենիկ) գոհացուցիչ էին։ Մնացածներն էլ, ոմանք թուրքահայ, ոմանք ռուսահայ, ինչպէս երևում էր, ըստ կարելւոյն ջանք չէին խնայել իրենց դերերը յաջող կատարելու։ Ի հարկէ այս համեմատութիւնն անում ենք իբրև թատերասէրների...

Դրանից յետոյ խաղացին ռուսերէն՝ «Изъ любви къ искусству» և «По публикаціи» կատակերգութիւնները, որոնց մասնակցում էր և դերասան Սաղովնիկով Թասասովկին։ Այդ պիէսները մեծ զուարճութիւն պատճառեցին հանդիսականներին։

Այնուհետև սկսուեց կոնցերտի բաժինը. երգեցին Մելիքեան և Իսկաչեան օրիորդները։

Գիշերի ժ. 12-ից մինչև 3-ը եւրոպական պարեր շարունակուեցին։

Դահլիճն ամբողջովին լիքն էր հանդիսականներով, որոնք գոհ սրտով հեռացան։

Լսում ենք, որ մի ուրիշ խումբ էլ պատրաստւում է ներկայացնել առաջին անգամ մի ինչ որ պիէս՝ «Թաղուած կայծեր» հեղ. Ս. Թառայեանի։

—Տեղիս երիտասարդ ուսանողութիւնը այսպէս եռանդուն կերպով ներկայացումներ սարքելու աշխատելով հանդերձ, ցաւ ի սիրտ պէտք է խոստովանուել, որ հասարակութիւնը բոլորովին անտարբեր է նրանց քաջալերելու։ Շատերը աւելորդ ծախս են համարում հայոց ներկայացման տոմսակ առնելը։

—Երկու անգամ եկել եմ ներկայացման (մինչ երկոյթի մասին է),—ասել է մի պարոն, երբ նրան մի րուբլիանոց տոմսակ են առաջարկել։ Ես վստահ եմ, որ այդ պարոնը համարեա ամեն օր գնում է «Ալէքսանդրեան», կամ «Մարինեան» և կամ այլ թատրոնները և այդ երբէք աւելորդ ծախս չէ համարում։ Այնտեղերում առաջարկող չկայ, ուզում ես մտ, ուզում ես մի առներ, դրա համար էլ քաղցր է գնալը։ Իսկ երբ նրան՝ տանըն հանգիստ նստած ժամանակ խնդրես մի տոմսակ գնել նա «կըքիւրարանայ»...

Ձմեռը կըգան, եթէ ձրի է, մի քանիսը ծանօթ-ուսանողի սախզման գիշերով, շատ հազիւներն էլ յօժարակամ։

Մինթէ կարելի է այսպէս վարուել։ Թող հասկանան, սակայն, որ տրուած կոպէկները ազնիւ նպատակների են ծառայում, իսկ այդպիսի կոպէկներ ամեն օր և ամեն տեղ առանց զգալու ծախսւում են անօգուտ...

Փուշ

ԱՍԽԱԲԱԴ, 30 յունուարի — «Ծօնքը չինելու տեղ, աչքը հանեցին». ժողովրդական այս իմաստալի առածը կատարուած ենք տեսնում մեզանում ննջեցեալների համար սրուած հոգեհացի (քէլեխի) վերաբերմամբ։ Մեզանում ևս, ինչպէս և ամեն տեղ, սովորութիւն կար ննջեցեալ պատահելիս մի թեթև սեղան պատրաստել գերեզմանատանը, ուր այդ նպատակով շինուած է և յատուկ սեղանատուն. ոմանք տանում էին միմիայն խաշած միս, հարուստները դրան աւելացնում էին և մի-մի կտոր ձուկ, իսկ չքաւորները բաւականանում էին նոյն իսկ լոկ պանիր հացով և մի երկու շիշ գինով։ Բայց այժմ, շնորհիւ թեմական իշխանութեան մի հրաւեռ կարգադրութեան, անցան այդ երանելի ժամանակներն իրենց ժլատ ու աղքատիկ սեղաններով և մենք ներկայումս ականատես ենք լինում այնպիսի ճոխ ու փարթամ «տրապեզների», որոնց հազիւ ենք պատահում նոյն իսկ հարսանիքների ժամանակ։ Ահա թէ ինչպէս փոխուեցաւ այս բոլորը։ Մօտ անցեալում, երբ մեր թեմի սրբազան առաջնորդն այստեղ էր, ժողովրդի ցաւերի և հոգսերի կապակցաւ մի քանի երիտասարդներ ներկայացան նրան և խնդրեցին կարգադրել քէլեխները վերացնել։ Առաջնորդը խոստացաւ պատուիրել քաղաքիս քահանաներին երբէք քէլեխի չմնալ և նոյն իսկ չօրհնել քէլեխի սեղանը, համոզուած լինելով, որ այդպիսով կըվերանայ քէլեխ պատրաստելու սովորութիւնը։ Քահանաները յայտնեցին եկեղեցում առաջնորդի նոր կարգադրութիւնը և յորդոր կարդացին վերացնել այդ անպէտ սովորութիւնը։ Վերացաւ, իսպառ վերացաւ ամեն մի կարգը- գերեզմանատան այլ ևս քէլեխ չկայ. բայց շնորհ բերէք ննջեցեալի տանը. այնտեղ արդէն երկար ու ձիգ փռուած են սպիտակ սփռոցները իրենց բոլոր պարագաներով, որոնց շուրջը բոլորելով ահագին այր և կին հասարակութիւնը մինչև ուշ երեկոյ ուտում-խմում են հանգուցեալի հոգու փրկութեան համար։ Այնտեղ, գերեզմանատանը, չկան մաքուր սփռոցներ, անձեռոցիկներ, պատառաքաղ ու դանակներ, ամաններ ու ըմպամաններ. այստեղ, տանը՝ ոչ մի թերութիւն չպէտք է ունենայ սեղանը. այնտեղ բաւականանում են մի կտոր խաշած մսով կամ պանիր-հացով, այստեղ բացի դրանցից կայ նաև գեօզ ու խաւիար, ասլմա ու փլաւ. այնտեղ հոգեհացով են բաւականանում, այստեղ հոգեհացը փոխւում են կենացների. այնտեղ քահանան էր թամադա, որ աշխատում էր շուտ վերջացնել և ժամերգութեան կամ ուրիշ օրինակատարութեան հասնել, իսկ այստեղ որոնում են աշխարհական «պատուանուորների» թամադաներ, որ որքան կարելի է երկար նստեն. մէջտեղ զըրկուողները քահանաներն են, որ բոլոր նեղութիւնը քաշելուց յետոյ քաղցած տուն են գնում։ Սրան կասեն «կաթկաթոցից հեղեղ ծըլորցի տակ մտանք»։ Այժմ, ինչպէս լսում ենք, նոյն հոգաբարձու երիտասարդները մտադիր են մի աղերսագրով դիմել հոգևոր իշխանութեան նախկին կարգը վերականգնելու։

Այստեղ չեմ ուզում լռութեամբ անցնել մի նախամտածուած, բայց չյաջողուած, «կոնցերտի» մասին։ Ամբողջ ամսից աւելի է, ինչ լսում ենք, որ մեր եկեղեցու խմբապետը, որ եկեղեցում ճառեր էլ է խօսում, պատրաստւում է տա-

գական երիտասարդների, տիկինների և օրիորդների բարեհաճ մասնակցութեամբ մի կոնցերտ տալ երկրաշարժից վնասուած անդիջանցիների օգտին. այսքան երկար սպասած կոնցերտի աֆիշները վերջապէս կպան Ասխաբադի պատերին յայտարարելու, որ կիրակի ամսիս 26-ին տեղի կունենայ հայոց կոնցերտը անդիջանցի սաբթեկի օգտին, բայց... «ի յիշատակ մեծ հրապարակախօսի...» որպիսի՜ սրտաշարժ զուգադիպութիւն. բայց արի տես, որ այդ զուրգուրած զուգադիպութիւնը խաթարելու զարձաւ խեղճ «կոնցերտչիների» գլխին և միւս օրը հրամայուեց աֆիշները պոկել և նորերը կպցնել, առանց «ի յիշատակ...» բառերի. մի խօսքով կոնցերտը յետաձգուեց և եթէ դարձեալ, բառ պոլսեցւոց, մի անակնկալ (սիւրպրիզ) չպատահի, տեղի կունենայ միւս կիրակի, փետրուարի 2-ին: Սակայն մի հարց կոնցերտի պ. պատասխանատու կարգադրիչին. եթէ կոնցերտը տրւում է «ի յիշատակ...»՝ էլ խեղճ ու կրակ անդիջանցիները մէջ ներ ինչ գործ ունեին, իսկ եթէ վերջիններիս օգտին է, տրւում, ինչո՞ւ արդիւնքի ամբողջապէս չյատկացնել նրանց: Մենք լսել էինք, որ «մի ձեռքով երկու ձմերուկ բռնել չի լինիլ», բայց մեր խըմբապետն աշխատում է երկուքը բռնել. կոնցերտը տրւում է «ի յիշատակ», վասն ազգասիրութեան. անդիջանցիների օգտին՝ վասն մարդասիրութեան և վերջապէս արդիւնքի 1/3 ը յատկացնում է իրեն՝ վասն անձնասիրութեան և արծաթասիրութեան։

Թաչիր

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

(«Նոր-Դար»-ի թղթակցութիւն)

—

ԹԵՀՐԱՆ.— 28-ն յունուարի—Ամսոյս 19-ին Թեհրան հասաւ անգլիացի լորդ Ծայար, որը, ինչպէս գրել էր թերթիս այսօրի թղթակից պ. Սասունցին, Ձահին մատուցանելու է բերել անգլիական ամենաբարձր շքանշանը՝ «ծնկակապը», որին պարսկերէն «Զանուբանդ» են անուանում: Լուր է պտտում «Ծնկակապ»-ի հետ նաև մի ձեռք հագուստ և Սադրազամի համար շքանշան բերելու մասին»:

Կէսօրից անց, լորդը իջաւ քաղաքից դուրս «Բաղի-Ձահի» կոչուած այգում, որտեղ թէյով հիւրասիրուելուց յետոյ մտաւ քաղաք և առաջնորդուեցաւ դէպի իր համար առանձնապէս պատրաստուած Նախկին սպասալարի տունը Ղալալաբաթ թաղում:

Առջեւից գնում էր կազակների մի գունդ կարմիր համազգեստներով, թըրերը կախած, բայց առանց հրացանի, յետոյ ժանդարմների (ջանդարմ) խումբը ապա եղպները (մասեան գունդ), որոնց նշանը իրենց ձիերի արծաթէ վզնոցներն են, որոնց հետեւում էին թագաւորական չաթիրների իրենց յետեւից տանելով անգլիական դեսպանատան զուլամներով շրջապատուած ծերունին, բայց առոյգ ու կայտառ լորդին, որի կողքին նստած էր ժանդարմների գլխաւոր Ազարալա խանը, իսկ առաջը՝ արքայազն Մասաֆի-Սալիրը Սալթանէն...

Լուր կայ, որ լորդին հերթով պէտք է հիւրասիրեն բոլոր պարսիկ մինիստրները քանի օր որ մնայ Թեհրանում: Որոշուած է նաև, թէ ովքեր պէտք է լինեն նրա շքախմբի անդամներ հիւրասիրութեան ժամանակ:

Ըստ երեւոյթին պարսիկները շատ ուրախ են լորդի գալստեան պատճառով և ամենքն էլ հաւատացած են, որ մի ինչ որ քաղաքական միտում է բերել նա իր հետ «Ծնկակապ»-ի հետ միասին:

Գիշերները լուսավառութիւն և հրավառութիւն կայ Սադրազամ-Աթաբէկ-Ազամի ծառատանում և Թոփխանի մէյդանում (Թնդանօթների հրապարակ) ի պատիւ լորդի...

— Պարսկաստանում թոյլը հզօրի գերին է, սարուկը: Օրէնք և քմահաճոյք — դրանք համանիշ բառեր են պարսիկ պաշտօնեաների աչքում: Այսօր այս ինչ օրէնքը գոյութիւն ունի, վաղն այն ինչը, միւս օրը՝ մի ուրիշ տեսակ, անշուշտ, տարբեր պաշտօնեաների համար: Բայց պատահում է նաև, որ միևնոյն պաշտօնեան օգտակար մի տեսակ օրէնք է հնարում իր համար... Օր. համար մինչև այսօր թերթիկ հասցէով ուղարկած նամակները բաց ընդունում էին պատասխանը և անհամեմատ աւելի էժան գնով, իսկ այսօր մերժեցին ինձ տարիկելով, որ կամ պէտք է փակեմ և կամ բաց, բայց փակածի հաշուով ուղարկեմ: Ի՞նչ կարող էի անել...

— Անցեալ 1902 տարուայ «Նոր-Դար»-ի №185-ի մէջ Թեհրանից հաղորդած լուրս յայտնել էի, որ մահմեդականների տարին ունի 13 ամիս, 384 օր եւն եւն...Դա մի մեծ և կոպիտ սխալ է, որը ի միամտութիւն «Նոր-Դար»-ի յարգելի ընթերցողների, շտապում եմ ուղղել: Ճիշտը պէտք է լինել. Մահմեդականների տարին ունի 12 ամիս կամ 355 օր...»

Ինձ սխալեցրել է Նոր-Ջուղայի նոյն տարուայ օրացոյցը, որից ես միայն կէս առ կէս արտագրել եմ լուրիս մէջ և ուրիշ ոչինչ, հաւատացած լինելով՝ որ Պարսկաստանի խորքում տպուած օրացոյցը այդ դէպքում չի խաբիլ ինձ... Արդ՝ ես հարցնում եմ. «Եթէ Նոր-Ջուղայում բուն գրած և օրացոյց կազմող ու-բարով հայր-սուրբեր պարապատանի կեղծում ապրելով հանդերձ այնքան բոբիկ են, որ մինչև անգամ չեն իմանում, թէ քանի ամիս ունի մահմեդականների տարին ու այդպէս սուտ ու սխալ յայտարարում են ի գիտութիւն աշխարհի, ապա ինչ՞ի մէջ բոբիկ չեն...»

Աղուան

ՔԱՂԱՔԱԿԱՆ

—

ԹՈՒՐՔԻԱ.—Բուլղարական «Вечерн. Почта» թերթի Կ. Պոլսի թղթակիցը հաղորդում է, որ թիւրք կառավարութիւնը, հակառակ իր բազմաթիւ պաշտօնական հերքումների, շարունակում է իր պատրաստման գործը երկրի բոլոր մասերում: Բոլոր նահանգների վարչութիւններին շրջաբերականներ են ուղարկուած զինումը առաջ տանելու մտքով: Ադրիանուպոլսի երկրորդ բանակի հրամանատարը հրաման է ստացել այդ քաղաքի և իր շրջականների տեղապահ զօրքի կազմը ընդարձակել: Թիւրքական զօրքերը կեդրոնացւում են Ադրիանուպոլսի նահանգի հիւսիսային կէտերում, բուլղարական սահմանագծի երկայնութեամբ: Նմանապէս Բ. Դրան կողմից հրաման է ուղարկուած արևելեան երկաթուղիների վարչութեան նստական ու շարժուն ծառայողների կազմը ընդարձակել Ադրիանուպոլսեան ամբողջ գծի երկայնութեան վրայ: Իսկ միւս կողմից, ներկայումս գործող մասնաւոր յանձնաժողովին հրահանգներ են տրւած անմիջապէս վերանորոգութեան ձեռնարկել Մակեդոնիայի այն տեղերի ռազմական ճանապարհների, որոնցից ենթադրւում է, թէ պէտք է անցնեն Սալոնիում և Բիթոլիայում բնակւող զօրքերը: Այդպիսով, այդ ճանապարհների վերանորոգման աշխատութիւնները բաժանուելով միքանի խմբերի, ամենայն արագութեամբ առաջ են տարւում:

Բայց այս բոլորից, միևնոյն թղթակիցը հաղորդում է, թէ թիւրք մինիստրների խորհուրդը իր վերջին նիստերից մէկում որոշել է անյապաղ ձեռնարկել Բաղդադի երկաթուղու առաջին մասի շինութեան: Այդ գծի շինութեան համար, որի երկայնութիւնը պէտք է լինի 200 կիլոմետր (մինչև Էրէգլի կոչուած տեղը) յատկացուած ու գանձուած է 18 միլիոն ֆրանկ:

—

ՄԱԿԵԴՈՆԻԱ. — Անգլիական «Westmin. Gaz.» թերթը հրատարակել է իր մի տեսակցութիւնը Ադրիանուպոլսից այսօրերս Լոնդոն գնացած Միքանով անձի հետ, որ շատ մօտից ծանօթ է մակեդոնական գործերին:

Պ. Միքանովի տուած տեղեկութիւնների համաձայն, Մակեդոնիայի բնակիչների թիւը հասնում է 2,500,000 հոգու, որից 1,300,000 ը քրիստոնեայ է, 800,000-ը մահմեդական և 75,000-ը՝ հրեայ: 800 հազար մահմեդականներից կէս միլիոնն է միայն բուն թիւրք. իսկ մնացածը քրիստոնէութիւնից դարձած յոյներ, ալբանացիներ և այլն են, որոնց մի ժամանակ բռնութեամբ դարձրած են մահմեդական: Այս միմեանց հակառակ տարրերի միմեանցից զատուելու ժամը դեռ չէ հասել, և ցանկալի է, որ նրանք դեռ կառավարուեն մի իշխանութեան հովանու տակ: Անհրաժեշտ է Մակեդոնիային տալ Բ. Դրնից միանգամայն անկախ մի կառավարչապետ, որպէսզի կարելի լինի այդ երկրում տեղի ունենալիք արիւնհեղութեան առաջն առնել: Եւրոպայում չեն կարող երբէք որոշ գաղափար ունենալ մակեդոնական գործերի վերաբերութեամբ: Ոչ թիւրք և ոչ էլ յոյն գիւղական գաւառակայքը խաղաղութիւն չեն յարուցանում: Սակայն թիւրք փոշտական իշխանութեան ի չարն գործածելը, թիւրք հարկահաւաքների ու ժանդարմերիայի ձեռքով կատարուած անկարգութիւնները և կառավարութեան բացակայութիւնը, գլխաւոր պատճառները պէտք է համարել ժողով. Բուլղարիա պատասխանելուն, որը մասնաւոր համակրանքով է վերաբերւում դէպի փախստականների: Բուլղարիայի զինուորականների մեծամասնութիւնը մակեդոնացի է և հենց այդ է պատճառը, որ Բուլղարիան երկար ժամանակ մասնաւոր միջոցով էր նպաստում մակեդոնական կոմիտեների Բուլղարիայում կատարած ագիտացիայի վրայ:

—

ԲՈՒԼՂԱՐԻԱ,—Բուլղար կառավարութիւնը որքան էլ արտաքուստ ամեն ջանք գործ է դնում տէրութիւնների համոզելու, թէ ինքը իրեն հեռու է պահում մակեդոնական խառնակութիւններից քաշվելուց, բայց և այնպէս թիւրք կառավարութեան իր քթի տակ տեսած զինուորական պատրաստութիւններից ազդուած, այս օրերս հեռագրով դիմել է բալկանեան խնդրով շահագրգռուող տէրութիւններին, Ռուսիային, Աւստրիային, Ֆրանսիային, բացատրութիւն պահանջելով նրանցից Թիւրքիայի կատարած պատրաստութիւնների մասին: Նա իր հեռագրի մէջ յայտնում է, որ օսմանեան կառավարութեան տեսած պատրաստութիւնների նպատակը եթէ միայն Մակեդոնիայի շարժումները զսպելն է,—չափազանց է, իսկ եթէ նրանք ծառայում են, բացի այդ, և ուրիշ նպատակների, այդ պարագայում, Բուլղարիան ևս պէտք է պատրաստուի իր պաշտպանական միջոցները ձեռք առնել: Բուլղարիան իր այդ դիմումին տէրութիւններից ստացել է շատ բացորոշ պատասխան, թէ իրենք չեն հաւատում Թիւրքիայի զինուորական պատրաստութիւններ տեսնելու լուրերին, և եթէ փոքր չափով այդ բանը կատարւում էլ է, այդ ծառայում է մակեդոնական շարժումները սանձելու մտադրութեան, և թէ տէրութիւնները ոչ մի պարագայի տակ թոյլ չեն տալ, որ Բալկանեան թերակղզում պատերազմ լինի, և այդպիսի դէպքում իրենք անմիջապէս կմիջամտեն:

— Բուլղարական «Новъ-Дневникъ» թերթը հաղորդում է, որ բուլղար կառավարութեան ձեռքով մակեդոնական կոմիտեների փակման նախընթաց օրը Միխայլով-Ցանչեւի Սոֆիա-Ադրիանուպոլսեան բարձրագոյն կոմիտեը եռանդուն կոչ է արել մակեդոնածին բուլղար բարձրաստիճան զինուորականներին, որ նրանք, ուշադրութեան առնելով Մակեդոնիայում բուլղար ժողովրդի քաշած տառապանքները, թողնեն բուլղարական ծառայութիւնը և մտնեն մակեդոնական ապստամբական խմբերի մէջ: Այդ կոչը, լրագրի հաղորդածի համաձայն, խիստ կերպով ազդել է երիտասարդ սպաների վրայ: Այս բանը ստիպել է բուլղարական զինուորական մինիստր Պապրիկովին խիստ հրամաններ տալ զօրքերի բոլոր մասերի հրամանատարներին՝ լուրջ կերպով հսկելու, մակեդոնածին զինուորականների վրայ և յայտնելու նրանց, թէ անհնազանդութեան ոևէիցէ դէպք կը յանձնուի զինուորական ատեանին:

—

ԱՆԳԼԻԱ.—Չեմբեռլէնը Պորտ-Էլիզաբէթում իր արտասանած վերջին ճառում յայտնել է, որ իր դէպի Հարաւային-Աֆրիկա կատարած ճանապարհորդութիւնը երկու նպատակ ունի: Նախ՝ տանել այնտեղ խաղաղութեան ու հաշտութեան լուրը և երկրորդ՝ Հարաւային-Աֆրիկայի իրաւունքներին ու պարտաւորութիւններին տալ պետութեան մէջ պատշաճաւոր տեղը: Հարաւային-Աֆրիկայի օդը մաքրուած է, ասել է անգլիական պաղթային միութիւնը, և նրան սպասում է փառաւոր ապագայ: Կապլանդիայում տիրող ներկայ քաոսային դրութեան պատճառն ուրիշ բան չէ, եթէ ոչ փոխադարձ անհիմն նախանձը: Հարաւային աֆրիկացիները պարտաւոր են մոռանալ, թէ ծագումով ովքեր են իրենք—հոլանդացի, թէ անգլիացի, պէտք է լինել միմիայն միացած տէրութեան քաղաքացիներ:

—

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ.

Ինչպէս երեւում է, վենեսուէլեան հարցը փակուած է: Արձանագրութիւնները ստորագրելուն պէս, Բոուէնը Անգլիական դեսպանին յանձնեց՝ այդ կառավարութեան պահանջներին բաւականութիւն տալու համար՝ 137,500 ֆրանկ իսկ Գերմանիան ստացել է՝ իբրև առաջին վճար՝ 1,718,000 ֆր. 1898—1900 թուականների քաղաքական պատերազմների ծախսերը ծածկելու համար. իսկ մնացած պարտքը նրան պէտք է վճարուի հինգ ամսի ընթացքում հաւասարաչափ վճարներով:

—Իտալիայի Վենեսուէլայից ունեցած դրամական պահանջին գոհացում պէտք է տրուի երկու ամսուայ ընթացքում:

—Կ. Պոլսից խփուած մի հեռագիր հաղորդում է, որ ալբանացիներն ուզում են Միտրովիցի ռուսական հիւպատոսին սպանել: Թուրք կառավարութիւնը իր թէ հրաման է ուղարկել այդ տեղի իշխանութիւններին ամեն կերպ աշխատել հիւպատոսի կեանքը ապահովելու համար:

—Բելգրադից հաղորդում են, թէ Իպէկի շրջակայքում տեղի է ունեցել մեծ միտինգ, ուր ալբանացիները բողոքել են Մակեդոնիայում ռեֆորմներ մտցնելու դէմ: Միտինգից յետոյ, բոլոր մասնակցողները գնացել ու քաղաքը գրաւել են և այդպիսով կտրել քաղաքի միւս տեղերի հետ ունեցած հաղորդակցութիւնը:

—Նիւ-Իօրկից հեռագրում են անգլիական լրագրներին, որ նշանաւոր միլիոնատէր Կարնէջին գրաւոր կերպով լուր է տուել Բոուէնին, թէ ինքը պատրաստ է նրան ներկայացնել անմիջապէս 360 հազար դոլար գերմանական պահանջներին գոհացում տալու համար, եթէ միայն Վենեսուէլայի կառավարութիւնը հաճի ընդունել: Բոուէնը յայտնելով իր շնորհակալութիւնը Կարնէջին, չէ ընդունել առաջարկուած գումարը, առարկելով, թէ Վենեսուէլան ինքն ևս կարող է այդ պահանջները կարգադրել:

—Ցունական կառավարութիւնը հաստատցնում է, թէ իր ձեռքին անհերքելի փաստեր ունի այն բանի վերաբերութեամբ, որ բուլղարական յեղափոխական կոմիտէի գործակալները աշխատելիս են եղել Ցունաստանում ապրող մակեդոնացիներից աւազակային խմբեր կազմել: Ցոյն ոստիկանութիւնը սաստիկ հետևում է զինուորագրութեան հրաւէր կարդացող այդ բուլղար գործակալներին:

„ՆՈՐ-ԴԱՐ"-Ի ՀԵՌԱԳՐՆԵՐ

(ՌՈՒՍԱՑ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ)

—

Փետրուարի 11-ից:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. — «Օրէնսդրութիւնների ժողովածուի» մէջ հրատարակուած է, որ հարաւ-արեւմտեան երկաթուղիների Կիև-Սարնը-Կովէլ մասն ենթարկուած է երկաթուղիներով ապրանքներ փոխադրելուն վերաբերեալ միջազգային պայմանագրի զօրութեան:

ԱՍԽԱԲԱԴ. — Ֆերգանի շրջանի նահանգապետի հրամանը տեղեկութիւններ է առաջ է բերում աղէտի չափի մասին. սպանուած ռուսներն Անդիջանում 5 հոգի են առանց զինուորական աստիճանների տեղացիները—1,016 հոգի, Անդիջանի գաւառի 158 գիւղերում—3,342, Մարգելանի գաւառի 106 գիւղերում—285 և Օշի գաւառում—4 հոգի: Սպանուած է եղջիւրաւոր անասուն՝ քաղաքում—1,375 գլուխ, Անդիջանի գիւղերում—4,693, Մարգելանի գիւղերում—518 և Օշի գիւղերում—139 գլուխ: Ցուցակագրուած են Անդիջանի շրջանում 6,675 աղքատացած տանտէրեր: Կայքերի կորուստները. ռուսաց քաղաքում քանդուած է 124 տուն, բացի կառավարչական և զինուորական շէնքերից, 956,220 րուբլու արժողութեամբ, բնիկների Անդիջանում քանդուած է 9,526 տուն 5.765,460 րուբլու արժողութեամբ, Անդիջանի գաւառի վոլոստներում—47,913 տուն 3.700,000 րուբլու արժողութեամբ, Մարգելանի վոլոստներում—6,522 տուն 406,000 րուբլու արժողութեամբ, Բալախչինեկու վոլոստում—795 տուն 82,042 րուբլու արժողութեամբ: Կորած շարժական կայքը գնահատւում է ռուսաց Անդիջանում 427,307 րուբլի, բնիկների Անդիջանում—320,758 րուբլի, Անդիջանի գիւղերում—919,136 րուբլի, հաշուելով եղջիւրաւոր անասունները. Մարգելանի գիւղերում—15,744 րուբլի, Օշի գիւղերում—4,494 րուբլի,

«Закасп. Об.» հաղորդում են, որ փետրուարի 7-ին կրկնուել են մէջ ընդ մէջ շատ զօրեղ ստորերկրեայ ցնցումներ:

ՊԱՐԻԶ. — Գիտութեանց ճեմարանը պրոֆեսոր Կոխին ընտրեց իբրև իր օտարերկրացի անդամ:

ԿԱՐԱԿԱՍ. — Ապստամբները պարտութիւն կրեցին Ռիօ-Չիկօյի մօտերքը:

Կ. ՊՈԼԻՍ. — Թեֆիկ-փաշան բարոն Կալիցէին և Զինովիևին հաղորդեց, որ սուլթանը համաձայն է յուշագրով առաջարկուած միջոցներին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. — Ժամը 3-ին 30 րոպէին վախճանուեց Մոգիլեօվի արքեպիսկոպոս՝ Ռուսիայում գտնուած հռոմէական կաթոլիկ եկեղեցիների միտրոպոլիտ Բոլեսլաւ Ցերոնիմոս Կլոպոտովսկին:

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

Պետերբուրգ 11 փետրուարի

Վեքսելի կուրսը երեք ամսով.

Լոնդոնի վրայ . համար	94,05
Բեռլինի » 100 մարկի	—
Պարիզի » 100 ֆրանկի »	—
Վեքսելի կուրսը չէքերով	
Լոնդոնի վրայ.	94,90
Բեռլինի »	46,27 1/2
Պարիզի »	37,72 1/2
Բորսային դիսկոնտը	5—6 1/2%
4% պետական ռենտը.	98
4% պետական փոխառ. թ. . . .	99 1/4
4 1/2% ներքին փոխ. 1893 թ. . .	100
4% գրաւաթղ. պետ. ազն.	
կալ. բանկի	95
5% ներք. խաղ. փոխ. 1864 թ.	456
5% ներք. խաղ. փոխ. 1866 թ.	362 1/2
5% խաղ. գր. պետ. ազն. կալ. բանկի	307 1/2
5% օբլ. Թիֆ. քաղ. վարկ. ընկ.	—
4 1/2% » » » » »	—
4% » Թիֆլ. կալ. բանկի	—
6 1/2% » » » » . .	
5% » Քութայիսի կալ. . .	
6% » » »	
6% » Բաքուի »	
Ակցիաներ Բաքուի նաւթ. ընկ.	400
» Կասպեան »	—
» Մանթաշեան և ընկ.	201
Փայեր եղբ. Նոբել »	9700
Ակցիաներ » « «	285

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

—

Հրատարակչական ընկերութեան ծախքով իմ «Ժողովրդական անգիր բանաստեղծութիւններ» խորագրով գրքերը ես ուղարկել էի իմ միքանի բարեկամներին ու ծանօթներին այլ և այլ քաղաքներ վաճառելու. բայց որովհետեւ մինչև օրս ոչ որից ոչ մի տեղեկութիւն չունիմ, ուստի դիմելով արգոյ խմբագրութեանդ խոնարհաբար խնդրում եմ թոյլ տալ ձեր պատուական

բագրի միջոցով յայտարարելու, որ ես յանձնարարում եմ յիշեալ բոլոր անձերին, որոնց մօտ գտնւում են իմ գրքերը ձրիաբար բաժանել տեղական գրադարանն..., ընթերցարաններին, գրոյ բաշխել ուսուցիչներին և տեղական ընթերցասէր չքաւոր դասակարգին, և ինձ այս մասին տեղեկութիւն տալ ի միամտութիւն։

Խորին յարգանօք՝

Տիգրան Վարդանեան

Դուրա. 5 փետրուարի

ԲԺԻՇԿ Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ

Ընդունում է մանաւորապէս սիֆիլիս, մորթի և վեներական ախտ ունեցող հիւանդներին։

Բժիշկօ—միկրոսկոպիական կաբինէտ, որտեղ ընդունւում են կաթի. խոխի, մէզի և արեան անալիզներ։

Առաւօտ 12—1 ժամը

Երեկոյեան 4—6 »

Թիֆլիս, Բեբուտովսկի փողոց № 41 տուն Արարատեանի։

(1141) 100—19

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ստացին շնորհակալութիւնս յայտնելով այն յարգելի անձնաւորութիւններին՝ որոնք բարեհաճեցին շնորհաւորել ինձ անուանակոչութեանս յիշատակի տարեդարձը, Ամենապատուիրելից մաղթում եմ նրանց համար ամենաերկար յաջողութիւն, առողջութիւն և երկար կեանք։

ՍՈՒՔԻԱՍ արք. ՊԱՐԶԵԱՆՑ

(52) 1—1

ԲԱՑ ՆԱՄԱԿ—ՊՈՍՏ ԿԱՐՏԵՐ

„ՆՈՐ-ԴԱՐ"-Ի Գ. ԽՄԲԱԳՐԻ

Լուսանկար պատկերով,

Ծախւում է հատը՝ 5 կոպ. գումարով գնողներին մեծ զիջում։

Ուրիշ քաղաքներ ուղարկւում է յիսուն հատը՝ երկու րուբլի յիսուն կոպ., հարիւր հատը՝ չորս րուբլի։ Հարիւրից աւելի գնողները ճանապարհածախս չեն վճարում։ Վերադիր վճարով ոչ ոքի չէ ուղարկւում։

Օտար քաղաքներից խնդրում ենք դիմել մեզ այս հասցէով՝ Тифлисъ, Даніелу Меликъ-Пашаянъ. Tiflis (Caucase) Daniel Melik Pachaian. (150) 10—3

ՄԵԾ ՕԳՈՒՏ

Մեր սինէմատոգրաֆիական գործիները (վերջին նորութիւն) ներմուծելու համար, մենք որոնում ենք ճարտար լրջմիտ գործակալներ փոքրիկ դրամագլխով։

Դիմել Պարիզ. Sté Générale des sinematographes et Films. Paris rue auteville, 33։ (1134) 0—14

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

„ՎԱՂԻ ՄՇԱԿՈՅԹ"

Կ. Կ. ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑԻ

206 երես 95 պատկերներով

Գինն է 1 րուբ.

Վաճառւում է Թիֆլիսում «Գուտենբերգ» և «Կեդրոնական» գրավաճառանոցներում, Բագու՝ Ս. Յարութիւնեանցի և Թադէոսեանցի գրախանութներում, Դերբէնդ՝ Կ. Հայրիջանեանցի և Գանձակ Ց.Մալեանցի և Աղաեանցի մօտ։

Թիֆլիսի ժողովարան

Հինգշաբթի, փետրուարի 13-ին

Վարդանանց տօնի առթիւ

Հայոց դրամատիկական ընկերութեան խումբը մասնակցութեամբ

Տ. ՍԻՐԱՆՈՅՇԻ

կըտայ իր հրաժեշտի վերջին ներկայացումն.

I

ԱՆԱԶՆԻՒ ՉԵՆ ՄՆՈՒՄ

դրամա 3 գործ. Ռովէթտի թարգ. Օ. Աբէլեանի.

II

ԴԱԼԱԼ ՂԱՂՕ.

վոդ. 1 գործ. փուզինեանի. մասնակցումէ ամբողջ խումբը. Տեղերի գինն է 2ր. մինչև 30կ. Տոմսակները կարելի է ստանալ կլուբի շվէյցարի մօտ

(49) 2—2

Երկրագործական-արհեստաւորական աղքատ գաղութների եւ ագարակների կովկասեան ընկերութեան վարչութիւնը, ընկերութեան կանոնադրութեան § 16-ի համաձայն խնդրում է ընկերութեան պ. պ. անդամներին շնորհ բերել սովորական

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ,

որը տեղի է ունենալու Թիֆլիսի դատական պալատի շէնքի մէջ կիրակի, փետրուարի 16 ին, օրուայ ժամը 1-ին։

Պարագմունքի առարկաները.

1) Վարչութեան գործունէութեան 1902 թ. տեղեկագիրը. 2) Ընկերութեան 1902 թ. դրամական հաշիւը. 3) Ձեմօ Աւճալայի ուղղիչ գաղութի 1902 թ. տեղեկագիրը. 4) Ընկերութեան 1903 թ. ելևմտից նախահաշիւը. 5) Վերստուգող յանձնաժողովի զեկուցումը 1902 թ. տեղեկագրի և 1903 թ. նախահաշուի մասին. 6) 1903 թ. համար վարչութեան 4 անդամ, կանդիդատներ և վերստուգող յանձնաժողով ընտրելու խնդիրը. 7) Ի. Դ։Մադալովին գաղութի տեսչի պաշտօնում հաստատելու խնդիրը։

ԾԱՆՕԹ.—Ընդհանուր ժողովը կայացած է համարւում 20 անդամից ոչ պակաս մասնակցելու դէպքում (Ընկ. կանոնադրութեան § 17)։

(Խմբ.) 3—2

№ 4711

О-ДЕ-ЛИ

AE DU LY

ՍՊԻՏԱԿ, ԿԱՐՄԻՐ և ԴԵՂԻՆ ԳՈՅՆԵՐԻ

ամենից ճանաչուած գեղարւեստական միջոց դէմքը լուանալու, երիտասարդական թարմութիւնը պահպանելու և դէմքի թծերն ու ամեն տեսակ անմաքրութիւնները փրկելու համար

ՖԵԴ. ՄՈՒԼԷՆՍ

ՔԵՕԼՆ ՌԷՅՆԻ ՎՐԱՅ և ՌԻԳԱ

Մատակարար Նորին Կայսերական Մեծութեան Արքայնիքի

(M.) 146263. 0—4

Թիֆլիսի ժողովարան

Ուրբաթ, փետրուարի 14-ին,

ԴԻՄԱԿԱՀԱՆԴԷՍ

(50) ընդհանուր հիմունքներով։ 3—3

ՓԵԹԱԿ և մեղուաբուծական պարագաների ՊԱՀԵՍՏ Թիֆլիսի այգեգործական դպրոցի դասատու

ՍՏՐՈՒՄԻԼՕՅԻ

Ընդունում են պատուէրներ մեղուաբուծական գործիքների, մեղուատու բոյսերի սերմերի, արհեստական շեղի և լորի փայտից շինուած հատը 7 րուբլի և աւելի արժեցող Դադանի փեթակների համար։ (47) 3—3



Բարձրդասակարգի կանայք ինչպէս և գեղեցկութեամբ անհանգստացող դէրասանուհիները հրաժարուեցին գործածել ԿՈՅԼԴ ԿՐԵՄ (Gold Creme), որ դառնահամ է և իւղոտի տեսք է տալիս դէմքին։ Դրա տեղ նըրանք գործ են ածում CREME SIMON (Կրեմ-Սիմօն) գեղեցիկ հոտ ունեցող արտադրութիւնը, որ երբէք չի փչանում և պնդացնող ու փափկացնող յատկութիւնների հետ միասին առաւելութիւն ունի պահպանելու դէմքի գոյնի շնորհալիութիւնն ու երիտասարդական թարմութիւնը։

LA POUDRE SIMON (Պուդր Սիմօն) La savon á la Creme Simon (Օճառ Սիմօնի) ունին նոյն հոտ և լրացնում են նրա զարմանալի յատկութիւնները J. SIMON 59Faubourg St.Martin Paris. Մաս-մաս վաճառւում է դարուածքների, պարֆիւմերների և դեղագործների մօտ։

(M. 189,290) 24—11

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՎԱՃԱՌԱՆՈՑ

Գնելով անմիջապէս մեզնից, դուք ձեռք բերած պիտի լինիք ամենալաւ ժամացոյց ամենաէժան գնով

Միմիայն 3 ր.



3 ր. կանխիկ վճարով

դուք կարող էք գնել ոսկեզօծ խրոնոգրաֆ-ժամացոյց կանգնած ժամանակը կանգնեցնելու մեխանիզմով և վայրկեանները ցոյց տուող սլաքներով։ Տրւում է երաշխաւորութիւն։

—

Նոր տարու կամ ծննդեան տօնի նուէր ձեզ եւ ձեր բարեկամների համար։

—

Դուք ուղարկում էք միմիայն 3 րուբլի, երբ ապսպրում էք մի ժամացոյց, ապա ամսական 1 րուբլի 12 ամսուայ ընթացքում ձեր գնածի վճարը լրացնելու համար, այսինքն 15 րուբլի, կամ թէ ձեր ապսպրանքի հետ ուղարկեցէք միանգամից 12 րուբլի և դուք կըստանաք ժամացոյցը առանց այլևս որ և է ման վճարելու,

Բոլոր ծախսերը հոգում ենք մենք մինչև ձեր տունը յետադարձ պոստով։

Մի մոռանաք՝

1) պարզ գրել ձեր անունը և հասցէն և, եթէ հնարաւոր է, լատինական տառերով.

2) պարզ գրել մեր ֆիրմայի անունը և հասցէն ծրարի վրայ նոյնպէս լատինական տառերով.

3) որ պոստային ծախսերը մինչև Անգլիա կազմում են 10 կոպէկ և որ մենք փողի տեղ չենք ընդունում պոստայի մարկեր։

4) Յիշեցէք, որ մենք զբաղուած մարդիկ ենք և չենք կարող երկար նամակագրութիւն տանել։

—

Վերոյիշեալ առաջարկն անւում է միայն իբրև յայտարարութիւն, որպէսզի խորհուրդ տանք ձեզ բերելու մեր համայն աշխարհում յայտնի խրոնոգրաֆ-ժամացոյցները։

Այս բանն իր զօրութիւնը պահպանում է միայն մի շաբաթ, սկսած լրագրի լոյս տեսած օրից, որը (լրագիրը) դուք պէտք է յիշատակէք ձեր ապսպրանքի նամակի մէջ։

—

Հասցէն գրեցէք պարզ

STEREOSCOP-GHRONOGRAPH GO., LONDON.

278. GITY ROAD, E. G.

Հարկաւոր են գործակալներ, բայց առաջարկներով կարող են դիմել միայն նրանք, որոնք կարող են տալ բանկային առաջնակարգ երաշխաւորութիւններ։

0—6

Թիֆլիսի ժողովարան

Ջարաթ օրը, փետրուարի 15-ին յօգուտ ձրի ու էժանագին ճաշարանների ընկերութեան կայանալու է սովորական

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

Բարեհաճ մասնակցութեամբ. տ. տ. Ն. Ա. Կուլիքէրի, Ե. Ա. Զօյլի, Մ. Ա. Բեժանբեկովայի. տ. Զ. ի Ե. Ա. Խաչախանի և պ. պ. Սեմիզարովի, Բիլչաէյնի, Նալբանդեանի, Չմշկեանի և մանդոլինիստների խմբի սիրողների պ. Փալինեանի ղեկավարութեամբ։ Երեկոյթից յետոյ լինելու է

ԴԻՄԱԿԱՀԱՆԴԷՍ „ԴՈՄԻՆՕ".

Երեկոյթի տոմսակները զօրութիւն ունեն և պարահանդէսի համար։ Երեկոյթի օրը դոմինօ և դիմակներ կարելի է վարձով ստանալ ժողովարանի սենեակներից մէկում։ Տոմսակները 4—1 րուբլի ծախւում են ընկերութեան նախագահուհի Ե. Ա. Ալթանգիլեանի մօտ՝ Դիրիօնգովսկայա փողոց։ տ. 34, 11—3 ցերեկը և 5—8 երեկոյեան, իսկ երեկոյթի օրը ժողովարանի շվէյցարի մօտ։ Դիմակների տոմսակները միայն անուանի ծախւում են ընկերութեան փոխ-նախագահուհի Վ. Ա. Եւանգուլեանի մօտ՝ Պասկեւիչի փողոց տ. Մանթաշեվի և վարչութեան անդամների մօտ՝ Օ. Ա. Կովալեվայի—բնակարան ռուսիկանայեսի Ե. Մ. Դոլուխանեանի—Դանիլովսկայա փողոց տ. Փրիգոնովի, Ե. Զ. Ալթանգիլեանի—Վելիամինովսկայա, 32, Ե. Մ. Իզմիրեանի—Լերմոնտովսկայա, սեփ. տուն և ընկերութեան գանձապահ՝ Ն. Մ. Տարասովի—Ղորղանեան փողոց, սեփ. տ.։

(Խմբ.) Դիմակահանդէսի տոմսակը արժէ 2 ր. 10 կ. 3—3

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԵՒ ՎԱՃԱՌՒՈՒՄ Է

„Մոխակ Հայաստանի"

ազգային լիակատար երգարանի առաջին հատորը—հինգերորդ տպագրութեամբ, բարեփոխած թէ հին գործածական և թէ նոր երգերով և բանաստեղծութիւններով, բաղկացած 382 մեծադիր երեսներից։ Գինն է 1 ր. 20 կ. ուղարկ. —1 ր.։ Ցանկացողները դիմում են ԲԱԳՈՒ. «Մոխակի» հրատարակչին՝ արդ. Протоіерею Григорію Григорянцъ, Баку. (48) 3—3

Ն. Վ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

ՀԱՇՈՒԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԸ

ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԵՆ

այն անձերին, որոնք ուզում են ունենալ տեսականապէս և գործնականապէս լիովին պատրաստուած ՀԱՇՈՒԱՊԱՀՆԵՐ արդիւնաբերութեան զանազան ճիւղերի համար, գրասենեակի ծառայողներ, կասսիրներ և նամակագիրներ որոնք ստացել են ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ ֆինանսների պ. մինիստրի հաստատած կանոնադրութեան հիման վրայ,—դիմել կուրսերի հիմնադիր Ն. Վ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻՆ, Թիֆլիս, Նիկոլայեւսկայա, 46. Տելեֆոն 744. (25) 10—6

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ԳՐԱՄՈՖՕՆ" „ԳՐԱՄՈՖՕՆ"

Թիֆլիս, Դուալուբինսկի պրոսպեկտ, տուն Աբրիկովի № 7։ Հասցէն և ապրանքի համար Թիֆլիս Գրամոֆոնի ընկերութիւն. Խանութ № 69.

Մեծ հաւաքածու բազմատեսակ ամենակատարելագործուած գրամոֆոնների։

Անհամեմատ հաւաքածու պլաստինկաներ յայտնի և երևելի երգիչների ռուս, հայ, վրացի, թիւրք. պարսիկ, լեհացի ֆրանսիացի, անգլիացի, իտալացի, գերմանացի և այլն։

Պլաստինկաների ընտրութեան ժամանակ, խնդրում ենք ուշադրութիւն դարձնել մեր գործարանի «հրեշտակը գրելիս» կնիքի վրայ, առանց այդ բանին պլաստինկները անպայման կեղծ են։

Ընկերութեան պահեստին հետ կայ յատուկ գործարան, որտեղ, հարկ պահանջած դէպքում ուղղում են գրամոֆոնները։

Գրամոֆոնների կանոնաւոր բանելու մասին, երեք տարուայ համար երաշխաւորութեան թուղթ է տրւում։

Ապրանք փոխանակելու և կոպելու ծախքը մարդինի հաշւին է։

Ապրանքների առաքումը մինչև բոլոր երկաթուղիների կայարանները (նոյնպէս և տեղական ամբարներին նաւահանգիստները) ընկերութիւնը իր հաշւով է անում։

Պոստով առաքման ծախքի կէսը «Գրամոֆոնի» ընկերութիւնը իր վրայ է առնում։

Կիրակի օրերը խանութը փակ է իսկ միւս օրերը առաւօտեան ժամը 8-ից մինչև երեկոյեան ժամը 9 բաց։

ՓԱՀԱՆՋԵՑԷՔ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԿԱՏԱԼՈԳՆԵՐ

Մեծ բուռով ամենքներին ուղարկւում է ըստ պահանջման նոր Պրէյս-կուրանտներ։ 1091 15—11

Тифлисъ Доз. цен. 21-го февраля 1903 г Տպարան ընկ. «Վերեյչև և Կամենմախեր» Типографія Т-во «Вереичевъ и Каменмахеръ» Михайловск. пр., № 81 Телеф. № 862